Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքը։

Եվա Հայրապետյան 4-3

Կատվազգիների ընտանիքին պատկանող այս կենդանին ամենախոշոր գիշատիչներից է: Վագրի մարմնի երկարությունը հասնում է մինչև երեք մետրի, իսկ կշիռը մոտ երեք հարյուր կիլոգրամ է

Վագրն ապրում է լեռնային անտառներում: Հրաշալի որսորդ է: Վազում է արագ և կարող է երկար հետապնդել որսին: Սակայն այդպես ավելի քիչ է պատահում: Խորամանակ գիշատիչը մեծ մասամբ հարձակվում է թաքստոցից. շերտավոր գունավորման շնորհիվ թաքնվում է թփերի մեջ և նույնիսկ մոտիկից չի նկատվում: Բացի այդ՝ որսում է հիմնականում հիվանդ ու թույլ կենդանիներ:
Վագրը որսին հետապնդելիս երկար լողում է, սակայն սիրում է նաև հենց այնպես լողալ:

Վագրի հզոր ժանիքներ ունի, բայց անգամ թաթի մի հարվածով կարող է որսին սպանել:

Նրա ցատկերը հասնում են հինգ մետրի:

Վագրը հարձակվում է եղջերուների, վարազների, լեռնային այծերի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ընտանի կենդանիների վրա: Եթե որս չի գտնվում, քաղցած վագրը սնվում է գորտերով, մկներով, նույնիսկ մորեխներով: Բայց կարող է նաև երկար ժամանակ դիմանալ առանց սննդի:

Մարդու վրա վագրը հարձակվում է, երբ վերջինս փորձում է բռնել կամ սպանել նրա ձագին, վիրավորում է գազանին կամ էլ խանգարում որսն ուտելուն:

Վագրը ունենում է երկուսից չորս ձագ: Ապրում է քսան և ավելի տարի:

Այժմ վագրերի թիվը խիստ կրճատվել է: Նրանք գրանցված են Բնության պահպանության միջազգային միության Կարմիր գրքում:

Առաջադրանքներ

1. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: Վագրն ապրում է.

- լեռներում,
- անտառներում,
- անապատներում,
- լեռնային անտառներում

2. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: Վագրը կշռում է.

- 500 կգ,
- 1 տոննա,
- 250 կգ,
- 300 կգ:

3. Ընդգծի՛ր սխալ պատասխանը: Վագրը որս անելիս.

- թաքնվում է թփերի մեջ և գաղտագողի է հարձակվում,
- չի թաքնվում և գաղտագողի չի հարձակվում:

4. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:

- Վագրերը ջրից վախենում են և երբեք ջուրը չեն մտնում:
- Վագրերը ջրային կենդանիներ են և ապրում են ջրում:
- Վագրը որսին հետապնդելիս երկար լողում է, սակայն սիրում է նաև հենց այնպես լողալ:
- Վագրերը լողալ չեն սիրում և ջուրը մտնում են միայն որսին հետապնդելիս:

5. Տեքստից դո՛ւրս գրիր այն հատվածը, որտեղ գրված է, թե ինչով է սնվում վագրը, երբ որս չի գտնում:

Գորտներով կներով և մորեխներով:
6. Գրի՛ր՝ ի՞նչ նոր բան իմացար վագրերի մասին:
Ես իմացա, որ վագրերը սնվում են գորտերով և նրանք 300կգ են:

7. Գրի՛ր կապույտ ներկված բառերի հականիշները:
Արագ – դանդաղ
Երկար – կարճ
Քիչ – շատ
Հիվանդ - առողջ

8. Դո՛ւրս գրիր երկու թիվ ցույց տվող բառ՝ թվական:
1 երեք հարյուր 2 երեք

9. Ինչպիսի՞ն է վագրը: Գրի՛ր երկու բառ:
1. Մեծ
2. գիշատիչ

10. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: «հրաշալի», «թույլ» բառերը ցույց են տալիս.

1. թիվ,
2. առարկա,
3. գործողություն,
4. հատկանիշ: